Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ն ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1945 թ. շրջադարձային էր Հայաստանյայց Եկեղեցու համար: Հաղթական ավարտ էր ունեցել Երկրորդ աշխարհամարտը խորհրդային ժողովրդի համար: Ճիշտ է, աշխարհավեր պատերազմի պատճառով հարյուրավոր քաղաքներ, տասնյակ հազարավոր գյուղեր ու ավաններ քարուքանդ էին եղել, երկրում տիրում էր թշվառություն և սով, բայց այդ բոլորը հաղթահարելու համար կար կամք և ցանկություն՝ վերաշինելու և վերականգնելու քայքայված գյուղատնտեսությունը, արդյունաբերությունն ու հողին հավասարված երկրի մեծ մասը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար նույնպես նշանակալի էր այդ թվականը: Մեկ տասնամյակից ավելի արհեստական բռնություններից, հալածանքներից ու քաղաքական իրավունքներից հայ եկեղեցականներին զրկելու, իսկ շատերին բանտեր ու աքսորավայրեր քշելուց հետո համայնավարական իշխանությունները փորձում էին մոռացնել տալ իրենց կատարած հանցագործությունները Հայ Եկեղեցու և եկեղեցականների նկատմամբ: Հակառակ դրական տեղաշարժերին՝ նրանք նույնիսկ փորձում էին խաղի նոր կանոններ առաջարկել՝ դանդաղեցնել և մերժման հասցնել Ամենայն Հայոց Հայրապետական տեղապահի բոլոր պահանջները՝ ճեմարանի վերաբացման և վերածնվող Հայ Եկեղեցու կարիքներին ընթացք տալու համար:

Այստեղ է, որ իր վիթխարի հեղինակությամբ ու տաղանդով հայոց հայրապետական ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը կարողացավ Ս. Էջմիածնում և նոր վերաբացվելիք Հոգևոր Ճեմարանում կատարելիք դերի մասին ճիշտ պատկերը ներկայացնել Խորհրդային Հայաստանի պետական այրերին:

ՀՀ ազգային արխիվում պահվում է մի փաստաթուղթ, որում շատ հստակ ձևով խոսվում է ճիշտ վերը նշված հարցերի մասին. «Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը իր դարավոր գոյության ընթացքում նպատակ է ունեցել ըստ ամենայնի ծառայել իր Ազգին…»: Նույն այդ փաստաթղթում Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան տեղապահը, խոսելով ճեմարանի վերաբացման մասին, գրում է. « … Ս. Էջմիածնի բարձրագույն հոգևոր ճեմարանն անհրաժեշտ հաստատություն է Ս. Էջմիածնի հեղինակությունը բարձրացնելու, հայ ժողովրդի հոգևոր-կուլտուրական պահանջներին բավարարելու և, որոշ տեսակետով նաև՝ հայրենի պետությանը օգտակար լինելու: Ս. Էջմիածինը, որպես գլուխ Հայ Եկեղեցու, անցյալում ղեկավարել է ինչպես հայ ժողովրդի կրոնական, նույնպես նաև նորա կուլտուրական կյանքը, ֆիզիկական գոյությունը և ազգային անկախ և ազատության ինքնագիտակցություն զարթեցնելով նորա մեջ՝ զերծ է պահել նրան ձուլման վտանգից: Եվ այս բոլորը արել է նա վանական գիտական դպրոցներում դաստիարակված Եկեղեցուն, ազգին և հայրենիքին նվիրված անձերի և գիտնական հոգևորականության շնորհիվ»:

77-ամյա ծերունազարդ և իմաստուն եկեղեցականին հանգիստ չէր տալիս պետական այրերի անտարբերությունը, որի արդյունքում նա փորձում էր կոտրել հայրենի կառավարության, մեղմ ասած, անուշադրությունը: Նրան այնուամենայնիվ հաջողվեց հասնել այն բանին, որ Մայր Աթոռում 1945 թվականի հունիս 16-22 ընկած ժամանակահատվածում հրավիրվեց Ազգային-եկեղեցական ժողով, որին ներկա էին Սփյուռքից և ներքին թեմերից 111 հոգևոր և աշխարհիկ պատգամավորներ: Ազգային-եկեղեցական այդ ժողովում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը միաձայնությամբ 110 քվեներով ընտրվեց Լուսավորչի գահի 129-րդ գահակալ: Նորընտիր Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 16-ին Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստում հանդես եկավ «Ս. Էջմիածնի բարձրագույն հոգևոր իշխանության քառամյա գործունեության մասին (1941-1945 թթ.)» զեկուցումով:

Այդ զեկուցման մեջ շոշափվում են Հայաստանյայց Եկեղեցուն վերաբերող շատ կենսական 15 հարցեր: Զեկույցի 6-րդ բաժինը նվիրված է ճեմարանին և հատուկ շեշտադրմամբ խոսվում է ճեմարանի բացման անհրաժեշտության, կուսակրոն և ամուսնացյալ հոգևորականների ծով կարիքների մասին. «Այսօր ի մխիթարություն մեզ բոլորիս,- գրում է Վեհափառ Հայրապետը,- կարող եմ հայտարարել, որ դժվարագույն խնդիրներից մեկը լուծվել է հիմնական կերպով և օրինական եղանակով. Ս. Էջմիածնին իրավունք է տրված հոգևոր ճեմարան ունենալ»:

Լավատեսական այս հայտարարությունը ժողովականներն ընդունում են մեծ ոգևորությամբ՝ դրանում տեսնելով իշխանությունների կողմից Մայր Աթոռի և Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ դրական այն փոփոխությունները, որին շատ վաղուց սպասում էին: Վերջապես իրագործվեց նաև հանգուցյալ Գևորգ Ե (կթղ. 1911-1930 թթ.) և Խորեն Ա (կթղ. 1932-1938 թթ.) Հայրապետների երազանքն ու իղձը, որը նաև մեր ողջ հավատացյալ ժողովրդի ցանկությունն էր:

Երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետը 1945 թ. Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովում հայտարարում էր, որ «Ճեմարանի բացման դժվարագույն խնդիրը լուծվել է հիմնական և օրինական եղանակով»: Իրականության մեջ այդպես էր, որովհետև ինքն Ազգային-եկեղեցական ժողովի սկսվելուց 2 ամիս առաջ հսկայական աշխատանք տանելով կարողացել էր հանդիպել Ստալինին՝ նրան ներկայացնելով 11 կետերից բաղկացած մի դիմումնագիր, որի առաջին կետը վերաբերում էր Հոգևոր Ճեմարանին. «Վերականգնել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը՝ ուսուցման 6-ամյա ժամկետով, որը կունենար 3 դասարան՝ միջնակարգ դպրոցի ծրագրով քահանաներ պատրաստելու համար, և 3 դասընթաց՝ բարձրագույն դպրոցի ծրագրով կրոնական եկեղեցականներ պատրաստելու համար՝ նպատակ ունենալով բավարարել հավատացյալ հայերի կարիքները ԽՍՀՄ-ում և արտասահմանում»[13]:

Գևորգ Զ Հայրապետը պահանջում է նաև Մայր Աթոռին վերադարձնել «նախկին Հոգևոր Ճեմարանի գրադարանը, որն այնքան անհրաժեշտ է նոր բացվելիք ճեմարանին: Ներկայումս այդ գրադարանը գտնվում է Մատենադարանում (հին ձեռագրերի պետական պահեստարան) և չի օգտագործվում»[14]:

---

[13] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ, Գևորգ Զ Չորեքչյան Կաթ. Ամ. Հայոց, կազմեց՝ Ս. Բեհբության, Երևան, 1999, էջ 256:

[14] Տե՛ս նույն տեղում:

Փաստաթղթում պահանջվում է նաև տպարան ունենալ, որտեղ պետք է տպագրվեին նաև «Հոգևոր Ճեմարանի դասագրքերը»[15]:

Պատմական այդ փաստաթղթի մասին խոսելիս, պետք է ասել, որ այն դարձավ ապագա բոլոր սկսվելիք գործերի սկիզբը: Զարմանալի է, բայց փաստ, որ անսահման լավատես ու հեռատես այս մեծանուն Հայրապետը դեռևս 1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովին, Հոգևոր Ճեմարանի բացման մասին զեկուցումից մեկ տարի առաջ, արդեն Մայր Աթոռի պաշտոնական «Էջմիածին» ամսագրի՝ 1944 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր միացյալ համարում, տպագրել է տալիս հայտարարություն Հոգևոր Ճեմարանի մասին: Ահա այն. «Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը կունենա եռամյա ուսման տևողություն: Հոգևոր Ճեմարան ընդունվել կարող են 18-36 տարեկան բոլոր անձինք, ովքեր ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն: Ճեմարանում սովորել ցանկացողները պետք է դիմումներն ուղղեն անմիջապես Ճեմարանի վարչությանը կամ տեղի հայոց Հոգևոր իշխանությանը: Դիմումի հետ պետք է ներկայացնել հետևյալ վավերագրերը՝ ծննդյան վկայական, ուսման ավարտական վկայական, բժշկական վկայական առողջության մասին, ինքնակենսագրություն, թեմական հոգևոր իշխանության վկայությունը նրա անձի մասին, 2 լուսանկար: Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ է և ուսումն անվճար :

(Ճեմարանի վարչություն)»[16]:

Կարծեք թե լուծվում էին բոլոր հարցերը: Կային նաև չլուծված գործնական հարցեր, որոնցից էր Ճեմարանի դասախոսների և վերատեսուչ ունենալու հարցը: Բացվելիք Հոգևոր Ճեմարանի գործերը պատշաճ կերպով կազմակերպելու և բացումը հնարավորինս արագացնելու համար Վեհափառ Հայրապետը, տեսչի պաշտոնի համար բազմաթիվ անձանցից դրական արձագանք ստանալուց հետո, հրավիրում է ժամանակի աչքի ընկնող մտավորական, անգլերեն լեզվի բարձրակարգ մասնագետ, ՀՀ Գիտությունների ակադեմիայում և Երևանի զանազան բուհերում դասավանդման երկար տարիների փորձ ունեցող Մինաս Սարգսի Մինասյանին: Եվ այսպես, 1945 թ. սեպտեմբեր 5-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից Մինաս Մինասյանին տրվում է պաշտոնական հրաման, որ նա նշանակվում է բացվելիք Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ. «Տրվում է սույնը Մինաս Սարգսի Մինասյանին, առ այն, որ նա 1945-46 թթ. ուս. տարվանից հրավիրված է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան՝ ռեկտորի պաշտոնով, որը ստորագրությամբ և կնիքի դրոշմամբ վավերացնում է.

Գեր. Հոգ. Խորհրդի ժամանակավոր
նախագահ, անդամ քարտուղար
5 սեպտեմբեր 1945»[17]:

Հակառակ տեղական իշխանությունների և չինովնիկների կողմից ստեղծած արհեստական դժվարություններին, Գևորգ Զ Կաթողիկոսը, անտեսելով բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ արգելքները, իրեն հատուկ համառությամբ, հետևողականութ-

[15] Տե՛ս նույն տեղում

[16] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր,1944, հոկտեմբեր-դեկտեմբեր:

[17] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 409, ց. 1, գործ 2311:

յամբ և գործիմացությամբ առաջ էր մղում Հոգևոր Ճեմարանի գործը: Կրթօջախը լավագույն դասախոսներով ապահովելու համար Վեհափառը հանձնարարում է ճեմարանի նորանշանակ վերատեսուչ Մինաս Ս. Մինասյանին առանց հապաղելու, շուտափույթ բանակցել հանրապետության լավագույն դասախոսների հետ՝ նախընտրությունը տալով նախկին ճեմարանցիներին:

Վեհափառ Հայրապետի համոզումն էր, որ հրավիրյալ նախկին ճեմարանցիները գործնական մասնակցություն կունենան կրթադաստիարակչական, ազգաշեն ու եկեղեցաշեն գործին, որով հնարավոր կլինի քայլ առ քայլ վերականգնել Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավանդույթները նորաբաց Հոգևոր Ճեմարանում: Վերատեսուչ Մ. Ս. Մինասյանը, օգտագործելով իր ծանոթություններն ու լայն կապերը, դիմում է անվանի մի շարք գիտնական դասախոսների, բայց դժբախտաբար արդյունքը շատ համեստ է լինում:

ՀՀ ազգային արխիվում պահվել է այն զեկուցագիրը, որ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչը 1945 թվականի սեպտեմբերին հասցեագրել է Գևորգ Զ Վեհափառին: Զեկուցագրի ենթավերնագրերից մեկը ձևակերպված է՝ «Դասախոսական կազմը», որում ասվում է. «Ցանկանալով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն ապահովել լավագույն դասախոսներով, մեկ ամսվա ընթացքում ես քանիցս դիմել եմ ժողովրդականություն վայելող հեղինակավոր դասախոսների, ինչպես նաև հատկապես նախկին ճեմարանականների, այսպես՝ դիմել եմ ակադեմիկոսներ Մալխասյանին, Աճառյանին, ճեմարանականների՝ Հովսեփ Գրիգորյանին, դոցենտ Բենիամին Հարությունյանին, Վարդան Փոթեյանին, պրոֆ. Աշոտ Աբրահամյանին, աշխարհագրագետ Հովհաննես Ստեփանյանին, Առաքել Առաքելյանին, պրոֆ. Կարո Մելիք-Օհանջանյանին, Հ. Պետրոսյանին, Լ. Բեկտաբեկյանին, երաժշտագետներ՝ Մուշեղ Աղայանին, Դանիել Ղազարյանին և այլոց: Դժբախտաբար վերոհիշյալներից շատերը հրաժարվում են հիվանդության կամ զանազան պատճառներով»[18]:

Թվարկված դասախոսներից շատերը 1937 թվականը զգացել էին իրենց մաշկի վրա, քանզի հենց այդ թվականից էլ նրանք տեսնում էին իրենց շարքերի նոսրացումը, իսկ մի մասն էլ անցել էին բանտերով և սիբիրյան աքսորավայրերով: Ինչ վերաբերում է պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանին և Առաքել Առաքելյանին, նրանք անկուսակցական էին և արդեն 1945 թվականից աշխատում էին Ս. Էջմիածնում՝ առաջինը որպես Հոգևոր Գերագույն Խորհրդի գիտական քարտուղար, իսկ Առաքել Առաքելյանը՝ Մայր Աթոռի պաշտոնաթերթ՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր:

Նաև ամենօրյա լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ կային կապված Հոգևոր Ճեմարանի շենքի, ննջարանների, ուսանողական սեղանատան և նյութական բնույթի տարբեր հարցերի հետ: Հայոց Հայրապետը շտապում էր: Հակառակ բոլոր դժվարությունների՝ պատվիրեց, որ 1945 թ. նոյեմբերի 1-ին կատարվի Հոգևոր Ճեմարանի բացումը: Այն տեղի ունեցավ նախկին մատենադարանի շենքում, որն ինչոր չափով հարմարեցված էր այդ նպատակին: Նորաբաց Հոգևոր Ճեմարան ընդունված սաների թիվը 35-ն էր, ովքեր ընդունելության քննություններն ավելի հաջող էին հանձնել:

---

[18] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 2308:

Հոգևոր Ճեմարանի տեսչի զեկուցագրից հստակ երևում է, որ նորաբաց կրթօջախի I լսարան ընդունվելու համար դիմել էին 54 հոգի, որոնցից ընտրվել էին 35-ը:

1945 թ. նոյեմբերի 1-ն էր, սովորական օրերից մեկը, բայց այն մտավ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմության մեջ որպես Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացման օր, որը փակվել էր 1917 թվականի դեկտեմբերին:

Նորաբաց ճեմարանի ընդունելության քննությունները հաջող հանձնած և արդեն ուսանողի հանգամանք ունեցողներս, որ արդեն ներկայանում էինք որպես նորաբաց ճեմարանի առաջին սաներ, հավաքվել էինք Մայր Աթոռի նախկին մատենադարանի շենքի առջև և սրտատրոփ սպասում էինք բացման պաշտոնական արարողությանը: Բոլորիս մոտ նկատելի էր անբացատրելի լարում, մտահոգություն և թաքնված ուրախություն, որ արդեն սաներն ենք Հոգևոր Ճեմարանի: Հարկ եմ համարում ասելու, որ ընդունված ուսանողներից շատերը եկել էին Հայաստանի զանազան շրջաններից, Երևանից և Էջմիածնից: Խայտաբղետ հագուստներով, գրական ու բարբառների խառնիխուռն խոսակցություններով զբաղված էինք, երբ միջին տարիքի մի մարդ (որը, հետո իմացանք, նախկին ճեմարանցի, մասնագիտությամբ իրավաբան՝ Արտաշես Դիլոյանն էր), ով հրավիրված էր ճեմարանի դասախոսի և վերակացուի պաշտոնով, մոտեցավ մեզ: Շարքով նա մեզ առաջնորդեց նախկին մատենադարանի 2-րդ հարկի գեղեցիկ և ընդարձակ սենյակներից մեկը: Տեղավորվեցինք մեզ առաջարկված ուսանողական սեղանների առջև, շունչներս պահած մեզ համար բոլորովին նոր միջավայրում և չափից ավելի հուզված սպասում էինք: Ազդարարեցին Վեհափառի գալուստը:

Մի քանի վեղարավորներ ներս մտան և ապա Ինքը՝ ազգիս սրբազնագույն կաթողիկոսը: Նորին Սուրբ Օծությանն ուղեկցում էին Ավետիք Իսահակյանը, ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանը, Դերենիկ Դեմիրճյանը, բանահավաք-ազգագրագետ Երվանդ Շահազիզը:

Բոլորի դեմքին ուրախություն կար, բայց նաև՝ մտահոգություն: Խորաթափանց հայացքով Հայոց Հայրապետը մեզ՝ ուսանողներիս իր վեհափառական հայացքի ներքո պահելով՝ սկսեց «Հայր մեր»-ը: Հատիկ-հատիկ լսելի էին մեզ «... եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն...» և հետո մի աղոթք ասաց, ապա սկսեց ճեմարանի շենքն ու առաջին ուսանողներին օրհնելու արարողությունը: Նրա իմաստուն աչքերից ուրախության արտասուք էր հոսում. «Օրհնեսցի և սրբեսցի նորաբաց Հոգևոր Ճեմարանս և ուսանողութիւնս...», հուզված և մի քիչ քաշված ձայնով երգում էր Վեհափառը: Օրհնության արարողության ավարտից հետո բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը: Խոսեցին նաև երկու եպիսկոպոսներ՝ Ներսես եպս. Աբրահամյանը և Ռուբեն եպս. Դրամբյանը, որոնցից հետո Վեհափառ Հայրապետը նստեց և սկսեց խոսել: Իր խոսքը բավական երկար էր:

Կարճ ժամանակ հետո ոգևորվեց ու ոտքի ելավ: Իհարկե, ինձ համար դժվար է 58 տարվա հեռավորությունից բառացի վերականգնել 77-ամյա ծերունազարդ իմաստուն այդ մեծ Հայրապետի խոսքը: Կարող եմ ասել միայն, որ նա խոսում էր մեղմ, իմաստալից, հատիկ-հատիկ: Կարկառուն այդ անհատականության խոսքից ներկաները հուզված էին և երբեմն մեկը կամ մյուսը թաշկինակով սրբում էր իր աչքերը: Տեսնել էր պետք սքանչելի, չկրկնվող այդ տեսարանը:

Պատկերացրեք, մենք գտնվում էինք հայոց մեծերից մի քանիսի առջև, որոնք փորձում էին իրենց դիմաց կանգնած սաների մեջ տեսնել գալիք հայ եկեղեցականներին: Ենթադրել կարող եմ, որ նրանք մտածում էին, որ արդեն իրականություն է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի բացումը, որը պետք է դառնար դարբնոցն իրենց առջև կանգնած ամոթխած, աշխարհի չարն ու բարին դեռ չգիտեցող պատանիներիս: Թվում էր, թե այս մտածումը շատերիս մոտ կար. «Պիտի կարողանա՞նք արդյոք տարիների ընթացքում դաստիարակվելով ազգային-եկեղեցական գաղափարներով՝ դառնալ մեր Սուրբ Եկեղեցու «մշակներ առանց ամօթոյ»:

Ամիսներ հետո, երբ մենք սկսեցինք հասկանալ ու ճանաչել մեր շրջապատը, հպարտ էինք, որ ժամանակակիցներն ենք Հայոց Առաքելական Եկեղեցու XX դարի մեծ անհատականության՝ Գևորգ Զ Հայրապետի, որն իրավամբ մեր Եկեղեցու երկնակամարի ամենալուսավոր աստղերից էր, որն իր մասին ճեմարանի բարերարներից մեկին գրած նամակում ասել է. «Մենք հուսալքման սովորութիւն չունենք և հեշտութեամբ չենք նահանջում մեր ճշմարիտ և արդար նպատակներից»[19]:

Հպարտ եմ, որ իմ ճեմարանական սերունդը ինը տարիներ ապրեց, սովորեց և աշխատեց Գևորգ Զ Հայրապետի ձեռքի տակ որպես ուսանողներ, ապա՝ սարկավագներ: Այդ մեծ անհատականությունն իր բազմազբաղ վիճակից ժամանակ էր գտնում զբաղվելու մեզանով, որ երախայրիքն էինք Հոգևոր Ճեմարանի: Նա մեզ սովորեցրեց բարություն, ազնըվություն, եկեղեցասիրություն և անսահման հայրենասիրություն, ինչպես նաև իր սկըզբունքներից՝ «երբեք չհեռանալ ճշմարիտ և արդար նպատակներից»:

Գևորգ Զ Հայրապետը, պետական այրերի քարացած մտածողությանը հակադրելով իր նուրբ դիվանագիտությունը, կարողացավ կանգնեցնել համայնավարական հակաազգային և եկեղեցական քաղաքական գիծը հանդեպ Մայր Աթոռի և ստիպեց հավիտենականն ու մնայուն արժեքները զանազանել ժամանակավորից: Այդ գործունեության արտահայտություններից մեկն էլ Հոգևոր Ճեմարանի վերբացումն էր:

Ճեմարանի բացման ուրախ առիթով բազմաթիվ կազմակերպություններից և զանազան անհատներից երանաշնորհ Հայրապետը ստացել էր շնորհավորական բազմաթիվ նամակներ և հեռագրեր, որոնցից մի մասը տպվեց 1945 թվականի «Էջմիածին» ամսագրի համարներում:

1945-1946 ուստարին առաջինն էր վերաբացված Հոգևոր Ճեմարանում: Դասերը կազմակերպվել էին Մայր Աթոռի մատենադարանի շենքում: Հաջորդական ամիսներին ի հայտ եկան բոլոր այն թերությունները, որ կային ուսումնական շենքում: Բնականաբար այս բոլորի մասին շատերը գիտեին, որոնց մասին, ի պատասխան Հայրապետի պահանջի, Հայաստանի կառավարության ներկայացուցիչները հավաստիացրել էին Վեհափառին, որ շենքային և դպրոցական գործում իրենց կողմից թույլ տրված թերությունները ժամանակավոր են:

---

[19] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ, Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց՝ Ս. Բեհբության, երևան, 1999, էջ 658-59:

1945-1946 թթ. ուստարում նորաբաց Հոգևոր Ճեմարանում, ինչպես արդեն ասել ենք, սաների թիվը 35-ն էր: Ուսումնական առաջին տարում ավանդվեցին հետևյալ առարկաները.

1. Հայոց լեզու - գրաբար և աշխարհաբար
2. Ռուսաց լեզու
3. Անգլերեն
4. Հայոց պատմություն
5. Հայ Եկեղեցու պատմություն
6. Հայաստանի աշխարհագրություն
7. Խորհրդային Միության սահմանադրություն
8. Կրոն - Հին Ուխտի պատմություն
9. Մաթեմատիկա
10. Երաժշտություն
11. Ֆիզկուլտուրա

Այս առարկաները դասավանդում էին 4-5 հոգևորական, մնացած առարկաները դասավանդում էին աշխարհական դասախոսները, որոնք հիմնականում նախկին ճեմարանականներ էին: Արդարությունը պահանջում է ասել, որ Հոգևոր Ճեմարանը, որպես նորաբաց ուսումնական հաստատություն, առաջին տարում ունեցավ բավականին բացթողումներ: Շենքային և ուսումնական գործի ընթացքի հետ կապված բացթողումներից բացի, լինում էին դասախոսների անկանոն բացակայություններ, որոնք կապված էին մայրաքաղաքից Էջմիածին հասնելու հետ:

Տարեվերջյան քննություններից առաջ իմացանք, որ Վեհափառը պարտադիր ներկա պետք է լինի քննություններին: Ուսանողներիս անմնացորդ սիրո և պատկառանքի հետ՝ հանդեպ Նորին Սուրբ Օծությունը, այնուամենայնիվ մեր մեջ կար քննությունների հետ կապված վախ և անվստահություն: Տեսչության կողմից այս զգուշացումը, այնուամենայնիվ, մեզ ստիպեց, որ քննություններին նախապատրաստվենք ավելի լավ: Հիշում եմ առաջին քննությունը: Գևորգ Զ Կաթողիկոսը, շրջապատված մի քանի վեղարավորներով և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներով (Ավետիք Իսահակյանի, Ստեփանոս Մալխասյանի, Սմբատ Շահազիզի) և մի շարք այլ անձանց, ներկա եղավ և մեծ համբերությամբ լսում էր մեր երբեմն անվստահ և մի փոքր երկչոտ պատասխանները:

Հաջորդական քննություններն անցան ավելի սահուն, անկաշկանդ և բարձր որակով: Վերջին քննությունից հետո Վեհափառը հայրական ու հայրապետական խորիմաստ կերպով գնահատեց ու քաջալերեց մեզ՝ հայտարարելով, որ «1946-1947 թթ. ուստարում կլինեն շատ նոր առարկաներ»:

Արժե նշել, որ ճեմարանի առաջին լսարանի 35 սաներից Բ լսարան փոխադրվեցին միայն 24-ը, մնացած 11-ը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դուրս մնացին Հոգևոր Ճեմարանից:

Չեմ կարող չասել նաև, որ ճեմարանի տեսչությունն առաջին իսկ շաբաթներից մշակեց և կիռառության մեջ դրեց նաև մեր օրվա ռեժիմը, որը, ենթադրում եմ, վերցված էր Գևորգյան նախկին ճեմարանի կանոնադրությունից: Ահա այն.

1. Վերկաց (արթնանալ) - 6:30

2. Առավոտյան մարմնամարզություն - 6:45
3. Ժամերգություն - 7:40
4. Նախաճաշ - 8:45
5. Ընդհանուր աղոթք ճեմարանի մեծ սրահում - 9:10
6. Դասերի սկիզբն ու ավարտը - 9:20 - 14:20
7. Ճաշ - 14:30
8. Ազատ ժամ - 15:00
9. Երեկոյան ժամերգություն - 16:40
10. Առաջին սերտողություն - 17:30
11. Ընթրիք - 19:30
12. Երեկոյան սերտողություն - 20:00
13. Ընդհանուր աղոթք քնելուց առաջ - 22:00

Ամառային արձակուրդների ընթացքում «Էջմիածին» ամսագրում հրատարակվեց Հոգևոր Ճեմարանի 2-րդ տարվա (1946-1947 թթ. ուստարի) ընդունելության հայտարարությունը, որում հատուկ ասվում էր. «Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ընդունելություն Ա և Բ կուրսերի 1946-47 թթ. ուսումնական տարվա համար…»:

Ամառային արձակուրդներից հետո, երբ վերսկսվեցին հաջորդ տարվա դասերը, մենք համոզվեցինք Վեհափառ Հայրապետի մեզ տված խոստմանը՝ հաջորդ ուսումնական տարվա առարկաների ավելացման վերաբերյալ: Այդ առթիվ «Էջմիածին» ամսագրի 1946 թ. հունիս-հուլիս համարների 28-րդ էջում կարդում ենք. «Հունիսի 7-ին և 10-ին կայացան Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերը, որում քննարկման ենթարկվեց, վերանայվեց ու ընդունվեց Հոգևոր Ճեմարանի Ա և Բ կուրսերի համար հետևյալ ուսումնական ծրագիրը 1946-47 թթ. ուստարվա համար.

		Ա կուրս	Բ կուրս
1.	Կրոն - Հին Ուխտ	2 ժամ	------
2.	Կրոն – Նոր Ուխտ և Գործք Առաքելոց	-------	2 ժամ
3.	Հայ Եկեղեցու պատմություն	2 ժամ	2 ժամ
4.	Հայոց գրականություն	2 ժամ	2 ժամ
5.	Հայոց լեզու և գրաբար և մատենագրություն	4 ժամ	4 ժամ
6.	Հայոց լեզու և գրականության տեսություն	5 ժամ	4 ժամ
7.	Ռուսաց լեզու և գրականություն	4 ժամ	4 ժամ
8.	Անգլերեն	3 ժամ	3 ժամ
9.	Մաթեմատիկա	4 ժամ	4 ժամ
10.	Հայաստանի աշխարհագրություն	3 ժամ	--------
11.	ՍՍՌՄ-ի աշխարհագրություն	-------	2 ժամ
12.	Ընդհանուր պատմություն (հին դարեր)	2 ժամ	--------
13.	Ընդհանուր պատմություն (միջին դարեր)	-------	2 ժամ
14.	ՍՍՌՄ-ի պատմություն	2 ժամ	--------
15.	Ֆիզիկա	2 ժամ	2 ժամ
16.	Երգեցողություն	2 ժամ	2 ժամ

17.	Երաժշտություն	-------	2 ժամ «[20]

Ներկայացված ուսումնական այս ծրագիրը հիմնականում կազմվել է Գևորդ Զ Կաթողիկոսի կողմից (Այս մասին տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1946 թ., հունիս-հուլիս, էջ 31):

Հոգևոր Ճեմարանը, որպես գիշերօթիկ ուսումնական հաստատություն, դժվարագույն այդ տարիներին իր բոլոր սաներին ապահովել էր սննդով, զգեստով, գրենական պիտույքներով և գիշերօթիկ դպրոցին հատուկ բոլոր պարագաներով: Սակայն ուսումնական առաջին տարում ի հայտ եկած անհետաձգելի լուծում պահանջող կարևոր խնդիրները, կապված Հոգևոր Ճեմարանի հետ, կաթողիկոսը փորձում էր լուծել համապարփակ կերպով, քանի որ խնդիրները շատ-շատ էին, օրինակ՝ մատենադարանի շենքի անհամապատասխանությունը ուսումնական կարիքներին: Նախկին Սինոդի շենքը (այսօր այն օգտագործվում է որպես հաշվապահության և տնտեսական գործերի գրասենյակ), որ տրամադրված էր Մայր Աթոռին որպես Հոգևոր Ճեմարանի ննջարան, չէր գործում, որովհետև պետք է հիմնավորապես նորոգվեր: Ճեմարանի մեծ սրահը վեր էր ածվել ննջարանի, և 35 սաներ գիշերում էին այդտեղ: Ճեմարանը չուներ ո՛չ խոհանոց և ո՛չ էլ սեղանատուն: Ուսումնական ողջ առաջին տարվա ընթացքում (1945-1946 թթ.) ուսանողության ճաշերը պատրաստվում էին Վեհարանի խոհանոցում և փոխադրվում մատենադարանի շենք, որտեղ երկրորդ սրահը հարմարեցված էր որպես սեղանատուն (այս մասին տե՛ս Մ. Մինասյանի գրավոր զեկուցումը՝ գրված 1946 թ. հունվարի 28-ին)[21] :

1945 թ. Ազգայի-եկեղեցական պատմական ժողովը հատուկ զբաղվել է ճեմարանի տնտեսական ապահովման հարցերով: Ժողովականներին ծանուցված էր ճեմարանի մեկ տարվա նախահաշիվը, որը հասնում էր 1.150.000 խորհրդային ռուբլու: Այդ ժամանակների համար նմանօրինակ թիվը շատ զգալի էր: Պետք է նկատի ունենալ ժողովականների խանդավառությունը, որոնցից շատերը սիրահոժար հանձն են առնում լուծել Հոգևոր Ճեմարանի տնտեսական ողջ ծախսերը:

Գևորգ Զ Հայրապետի առաջարկով ժողովականները որոշում են, որ նորաբաց ճեմարանի յուրաքանչյուր սանի տարեկան ծախսը չպետք է գերազանցի 500 ամերիկյան դոլարի սահմանները: Հայրենասիրական և եկեղեցասիրական վերելքի պայմաններում Ազգային-եկեղեցական ժողովում լինում են 35 սաների որդեգրման խոստումներ, ինչպես նաև կանխիկ գումարի զգալի մուծումներ:

Ճի՛շտ է, հայրենասիրության և եկեղեցասիրության ալիքի վրա եկած խոստումների մեծ մասը զանազան պատճառաբանություններով հետագայում չկատարվեցին, բայց դա չի նշանակում, որ նորաբաց ճեմարանի պահպանման խնդիրը խափանվեց:

Գևորգ Զ մեծագործ Հայրապետն իր Կոնդակով և նամակներով կարողացավ սփյուռքահայությանը ոգևորել, որով հնարավոր եղավ նյութական նոր միջոցներ հայթայթել: Նորին Սրբությունը դիմեց զանազան կտակների՝ Մասեհ-Բաբաջանյանի, Եղիայան հիմնադրամի և մի շարք անհատ բարերարների, որոնք որդեգրեցին

[20] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1946, հունիս-հուլիս, էջ 28:

[21] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 823, գործ 8, էջ 7:

բավական թվով սաներ: Ես մինչև այսօր էլ հիշում եմ անհատ բարերարներից՝ Եգիպտահայ Ճանիկ Չաքրին, որը որդեգրել էր երկու սան, Միացյալ Նահանգներից՝ Հայկ Գավուկյանին՝ 3 սան: Սաներ որդեգրվեցին Ամերիկայի Արևելյան և Արևմտյան թեմերի, Եգիպտոսի թեմի, Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության և զանազան այլ ազգային-եկեղեցական կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, կարելի է ասել, որ նորաբաց Հոգևոր Ճեմարանի մի քանի տարիների նյութական ապահովության հարցը լուծված էր: Հայթայթված նյութական միջոցներով ոչ միայն ապահովվեցին ուսանողների ամենօրյա հոգսերը, այլև կարևոր մի հարց՝ հնարավոր դարձավ ճեմարանը որակյալ դասախոսներով ապահովել և ճիշտ ձևով կազմակերպել նաև ուսանողների թե՛ ուսումնա-դաստիարակչական և թե՛ հանգստի գործը:

Արդեն առիթ ենք ունեցել ասել, որ Հոգևոր Ճեմարանին հատկացված շենքը շատ անհարմարություններ ուներ: Այս վիճակը շտկելու և շենքային վիճակը բարելավելու համար Գևորգ Զ Հայրապետն առաջին ուսումնական տարվա ավարտից անմիջապես հետո դիմում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ վերադարձնելու նախկին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսումնական և ննջարանային շենքը:

Խորհրդային պաշտոնյաները սակայն մերժեցին լուծել այս հարցը՝ հանձնարարելով Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահին՝ բանավոր պատասխանել Գևորգ Զ Կաթողիկոսին: Պատասխանն էր.- Առայժմ հնարավոր չէ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և ննջարանային շենքերի վերադարձը:

Խորհրդային կառավարության ներկայացուցչի բանավոր պատասխանն ուղղակի զայրացնում է ծերունազարդ Հայրապետին, որն էլ բավական չոր ու կոպիտ ոճով գրավոր դիմում է վերստին Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացուցչին. «Անցեալ ուսումնական տարում,- (խոսքը 1945 թ. առաջին ուս. տարվա մասին է) գրում էր երանաշնորհ Հայրապետը,- Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին յատկացուած շէնքը ինչպէս Մենք՝ հիմնաւորեալ և պատճառաբանեալ գրութեամբ՝ յայտնել ենք Մինիստրների Սովետի, իսպառ անհարմար է գիշերօթիկ Հոգևոր Ճեմարանի համար: Ուստի և խնդրել ենք Հոգևոր Ճեմարանի նախկին շէնքն ու ննջարանը: Ձեր բանաւոր բացատրութիւնները Մեզ չեն գոհացնում: Նա՝ որ թոյլատրել է բանալ ճեմարանը, կասկածից դուրս է, որ նկատի է առել և շենքի հատկացումը:

Եթէ 1946-47 թթ. ուսումնական տարում էլ ճեմարանը պիտի մնայ նոյն շենքում, Մենք կամ պիտի հրաժարուենք պահպանման գործին մասնակցելուց և կամ այլ դռներ բախենք, որպեսզի Մեր խղճի դէմ չմեղանչենք»[22]:

Զանազան պատճառաբանություններով փորձում էին խանգարել Հոգևոր Ճեմարանի առաջընթացին, որին այնքան շատ ձգտում էր Հայոց Հայրապետը: Կարծեք թե ինչ-որ տեղ խորհրդային չինովնիկներին դա հաջողվում էր: Շատ հաճախ այդ պաշտոնյաները փորձում էին պատճառաբանել, որ վերադարձվելիք ճեմարանի շենքում երկու հերթով սովորում են հայ երեխաներ: Ավելի առաջ գնալով՝ խորհր-

[22] «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության»., գիրք Զ, Գևորգ Զ Կաթ. Ամենայն Հայոց, կազմեց՝ Ս. Բեյբության, Երևան, 1999, էջ 330:

դային պաշտոնյաները փորձում էին ստախոսությամբ գերազանցել միմյանց՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծրագրել է հայ երեխաների համար մի նոր դպրոց կառուցել, որից հետո շատ ավելի հեշտ կլինի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շենքի վերադարձումը Մայր Աթոռին: Իրականության մեջ այդ դպրոցական շենքի կառուցումը չկար և երբեք չեղավ:

Համայնավարական կառավարության խոստումը կատարվեց 40 տարի հետո միայն, 1990-ական թվականներին, որի վերադարձման համար այնքան շատ տքնել էին Տ. Տ. Գևորգ Զ (1945-1954) և Տ. Տ. Վազգեն Ա (1955-1994) Հայրապետները: Հոգևոր Ճեմարանի առաջին ուսումնական տարեշրջանը (1945-1946), հակառակ բազմաթիվ դժվարություններին, ուսումնական առումով, այնուամենայնիվ, ավարտվեց բավարար արդյունքով:

Ճեմարանի տեսչությունը, ոգևորված առաջին ուսումնական տարվա հաջողություններով, 1946-1947 ուստարվա ընդունելություն հայտարարեց. եղան բավականին թվով դիմորդներ: Նրանցից սակայն ճենարանի ուսանողի համազգեստ սկսեցին կրել միայն 20 հոգի:

Երկրորդ ուսումնական տարում Հոգևոր Ճեմարանն ուներ արդեն 47 ուսանող, որոնք բաժանված էին Ա և Բ դասարանների վրա: Հիշյալ ուսումնական տարում ավելացան մի քանի նոր առարկաներ, որի համար հրավիրվեցին համապատասխան մասնագետ դասախոսներ: Հայոց պատմություն առարկայի համար, որին Գևորգ Զ Կաթողիկոսը բացառիկ կարևորություն էր տալիս, հրավիրվեց ժամանակի հայտնի պատմաբան-աղբյուրագետ Ասլան Շահնազարյանը, որի մասին դեռ այն ժամանակ ասում էին, որ նա նախկին ճեմարանցի է: Ասլան Շահնազարյանը Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո սովորել էր նաև Գերմանիայում: Գևորգ Զ Կաթողիկոսը, բարձր գնահատելով Ասլան Շահնազարյանի գիտական և դասախոսական վաստակը, հատուկ նամակով դիմել էր նրան նախապես հաղթահարելով բավական դժվարություններ՝ համաձայնեցնելով կառավարական համապատասխան օղակների հետ: Այդ առթիվ կաթողիկոսը հատուկ նամակով դիմում է Ասլան Շահնազարյանին՝ գրելով. «Այս տարի բացվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի առաջին լսարանը, ուր ի միջի այլոց պիտի ավանդվի նաև հայոց պատմություն՝ աղբյուրների ուսումնասիրությամբ, սեմինարական աշխատանքներով: Այս առարկան երկու-երկու դասով պիտի ավանդվի հաջորդաբար 3 լսարաններում: Նպատակը պարզ է, գիտական ուսումնասիրության սեր և ճաշակ զարգացնել ուսանողների մեջ, նոցա գիտական մեթոդ տալ և նոցա առաջ ապագա աշխատանքների ուղին հարթել: Դուք պիտի հանձն առնեք ավանդել հայոց եկեղեցական մատենագրություն կամ հայրաբանություն, որի միակ կանդիդատը կարող եք համարվել:

Մեծահույս ենք, որ Դուք սիրով պիտի հոժարիք հիշյալ երկու առարկաների դասավանդությունը, գիտենալով նոցա խոշոր արժեքը մեր հաստատության համար, այլ և այն հանգամանքը, որ միայն Ձեզ կարող ենք վստահել այս առարկաների դասավանդությունը: Նկատի առեք նաև, որ Ձեր հաջողությունը, որի մասին անկասկած ենք, Ձեզ համար պատվո նոր դռներ պիտի բանա:

Հարգանաց և սիրո ողջունիվ և օրհնությամբ»[23]:

---

[23] ÐÐ ²½· ³ÛÇÝ ³ñËÇí, ý. 823, ó. 1, ·áñÍ 2321:

Նա այն անձնավորությունն էր, որ ուսանողների մեջ արթնացրեց սեր և հպարտություն մեր Եկեղեցու հազարամյա պատմության և մեր անկրկնելի հարուստ մշակույթի նկատմամբ: Մեզ համար գերազանց որակի այս դասախոսը ճեմարանում, դժբախտաբար, դասավանդեց միայն 2 կամ 3 տարի: Ենթադրել կարող եմ, որ Ասլան Շահնազարյանին իշխանությունները հնարավոր բոլոր միջոցներով զրկեցին ճեմարանում դասավանդելու հնարավորությունից:

Ուսումնական ծրագրերում առարկաների հավելման պատճառով հրավիրվեցին նաև երաժշտության համար վաստակավոր ուսուցիչ, երգահան Դանիել Ղազարյանը, Հայ Եկեղեցու պատմության առարկայի համար՝ Անթիլիասի դպրեվանքի դասախոս Եղիշե Վարդերեսյանը, մաթեմատիկա, ռուսաց լեզու և այլ առարկաների համար նույնպես դասախոսներ հրավիրվեցին: Երկրորդ ուսումնական տարում մեր զբաղվածությունն ու ծանրաբեռնվածությունն ավելի էր, քան նախորդ տարում: Երկրորդ դասարանում ուսման հետ միասին վերականգնվեց գեղեցիկ մի ավանդույթ ևս. դասարանական պարապմունքներից զատ դասախոսները շատ հաճախ կարդում էին զեկուցումներ՝ աշխարհագրությունից, տոմարագիտությունից, տիեզերագիտությունից, գրականությունից և այլ առարկաներից ու թեմաներից: Ունենում էինք գրական-գեղարվեստական երեկոներ, որոնցում հանդես էին գալիս հիմնականում ուսանողները: Բավական հաջող, ավելի քան նախորդ ուսումնական տարեշրջանն ավարտեցինք՝ լավատեսորեն նայելով մեր ապագային: Հակառակ անսահման լավատեսության, Հոգևոր Ճեմարանի ուսանողներս ունեինք մեզ համար չլուծվող խնդիրներ: Հոգևոր Ճեմարանը վերաբացվել էր խորհրդային երկրի բարձրագույն իշխանության թույլատրությամբ, բայց տեղական կառավարության և կոմերիտական (երիտասարդական) կազմակերպությունների միջոցով տարվում էր մտածված և ծրագրված քարոզչական և քայքայիչ աշխատանք ընդդեմ Եկեղեցու և նրա ամենակարևոր օջախի՝ Հոգևոր Ճեմարանի: Այդ աշխատանքը տարվում էր ծրագրված բոլոր հնարավոր և անհընարին միջոցներով:

Շատ հաճախ կոմերիտական (երիտասարդական) ակտիվիստները հայտնվում էին մեր շրջապատում և փորձում համոզման և նույնիսկ հարկադրական միջոցներով ներազդել մեզ վրա: Նրանց կարծիքով մենք «մոլորվածներ» էինք, որ եկել էինք ճեմարան: Վանքի «հետամնաց», «խավարասեր» միջավայրը ճեմարանցիներին հեռացնում է կոմունիզմ կառուցող խորհրդային հասարակությունից:

1946-1947 ուսումնական տարվա ընդունելությունից հետո ուսանողության թիվը անգամ 40-ից ավելի էր: Ընթերցողի մոտ կարող է հարց առաջանալ. ինչպե՞ս պատահեց, որ ճեմարանում ուսման երրորդ՝ 1947-1948 ուստարվա նոր ուսանողներ ընդունելուց հետո ուսանողության թիվն իջավ 39-ի: Շատ ճիշտ է, պետք է ասել, որ արտաքին կուսակցական և կոմերիտական բռնի հարկադրանքի ազդեցության արդյունքում ուսանողության արտահոսքը ճեմարանից շատ մեծ թիվ էր կազմում: Բացի այդ, պետական համապատասխան մարմինները օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ուղղակի միջամտությամբ, պակասեցնում էին մեր ուսանողության թիվը՝ հասցնելով այն ոչ ավելի, քան 40-ի՝ պատճառաբանելով, որ կենտրոնական իշխանության թույլտվության իրավունքը միայն 40 ուսանողի համար էր: Այս ամենով հանդերձ, կրթօջախի գոյության երրորդ ուսումնական տարվա շեմին կար ան-

սահման հավատք և սեր ճեմարանի, առավել ևս Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի և ուսանողության պաշտամունքի վերածված Լուսավորչի արժանավոր գահակալ Ամենայն Հայոց Գևորգ Զ Կաթողիկոսի նկատմամբ: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ 1947-1948 ուստարեշրջանում, երբ արդեն Հոգևոր Ճեմարանում կային 3 դասարաններ, դժբախտաբար, ուսանողների թիվը մեծ չէր, ընդամենը 39:

Այս շրջանում Հոգևոր Ճեմարանում կային բավականին թվով հայրենադարձ ուսանողներ Սիրիայից, Եգիպտոսից, Պարսկաստանից, Լիբանանից, Վրաստանից, Արցախից, Հյուսիսային Կովկասից և այլ վայրերից: Նաև եթե 1945-1946 ուսումնական տարեշրջանում սաները հիմնականում հայաստանցիներ էին, ապա 1947-1948 ուստարում այդ աշխարհագրությունն ընդլայնվեց ի հաշիվ հայրենադարձության, որը բավական բարձր որակ ապահովեց ճեմարանի ուսանողական կազմում:

Ուսման երրորդ տարում ունեցանք նոր դասախոսներ հայոց լեզվի և գրականության նոր շրջանի պատմության, աշխարհագրության և մի քանի կրոնական առարկաների (Ուսումն Սուրբ Գրոց, Կարգ Աստվածպաշտության, Քրիստոնեական Վարդապետություն): Երրորդ ուստարվա ընթացքում ավելացան նաև արտադասարանական պարապմունքները: Ուսանողների մեջ ինքնուրույն մտածողության և աշխատանքի ունակություններ պատվաստելու նպատակով, ճեմարանի տեսչությունը դասախոսների գործուն մասնակցությամբ Հոգևոր Ճեմարանում կազմակերպում էր գրական-գեղարվեստական երեկոներ, որոնք հիմնականում նվիրված էին լինում ազգային-եկեղեցական տոներին և հայ գրականության և մշակույթի ճանաչված դեմքերին:

Ճեմարան ընդունվելու առաջին իսկ օրից զգալի էր այն աշխատանքը, որ տանում էր ճեմարանի տեսչությունը սաներիս հայրենասիրությունը և եկեղեցասիրությունը բարձր հիմքերի վրա դնելու համար: Ճեմարանի համար ուսումնական երրորդ տարին նշանավոր էր նաև, որովհետև առաջին սաներս ավարտում էինք դասարանական բաժինը և պիտի պատրաստվեինք անցնելու ճեմարանի ուսումնական բարձրագույն բաժնի առաջին լսարան: Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնի ծրագրով նախատեսվում էին հետևյալ մասնագիտական առարկաները.

1. Հայոց հին մատենագրություն
2. Եկեղեցական մատենագրություն
3. Հնագրություն
4. Տոմարագիտություն
5. Աստվածաբանություն
6. Կրոնների պատմություն
7. Ներածություն Սուրբ Գրոց
8. Մեկնություն Հին և Նոր Կտակարանների
9. Հիսուսի կյանքը
10. Փիլիսոփայության պատմություն
11. Հոգեբանություն
12. Տրամաբանություն
13. Հայոց լեզվի պատություն

14. Հայոց լեզվի տեսություն
15. Հայ գրականության պատմություն
16. Ռուս գրականության պատմություն[24]

1947-1948 ուսումնական տարեշրջանի քննություններն անցան մեծ հաջողությամբ: Մայր Աթոռում ուրախ էին բոլորը: 1949 թվականի ուսումնական տարեշրջանում Հոգևոր Ճեմարանն ունենալու էր արդեն առաջին լսարան, որը հավասարազոր էր բարձրագույն կրթության առաջին աստիճանին:

Երրորդ՝ 1947-1948 ուստարվա ամավերջի քննություններից հետո Գևորգ Կաթողիկոսի ոգևորությունն այնքան բարձր էր, որ ամավերջի քննություններից հետո սովորականից ավելի երկար խոսեց՝ հաստատելով, որ, հակառակ արտաքին և ներքին դժվարություններին, Հոգևոր Ճեմարանն արդեն կայացած, լիարժեք կյանքով ապրող կրոնական հաստատություն է: Վեհափառը, վերլուծելով նախկին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի կրթական նպատակը, բացատրեց մեզ, որ նախկին Ճեմարանն ուներ ուսումնառության 3 ուղղություն՝ հայագիտական, մանկավարժական և աստվածաբանական՝ տալով հայ ժողովրդին գիտնականներ, հոգևորականներ և ուսուցիչներ:

-Գևորգյան Հոգևոր Ճեմարանը,- ասում էր վեհափառը,- պատվով կատարեց իր առջև դրված պատմական այդ մեծ առաքելությունը:

Խոսելով մեր Ճեմարանի մասին՝ հիշեցրեց մեզ, որ մեր Ճեմարանը նպատակ ունի Հայ Եկեղեցուն տալ կրթված, հավատավոր եկեղեցականներ՝ շեշտելով կրթության և գիտության կարևորությունը հատկապես մեր եկեղեցականների կյանքում, հիշեցնելով մեզ՝ ուսանողներիս, որ ավանդվող բոլոր առարկաները կարևոր են.

-Բայց ձեզ համար,- շեշտում էր Հայոց Հայրապետը,- որ ապագա եկեղեցականներ եք, շատ եմ կարևորում հայոց պատմության, Հայ Եկեղեցու պատմության, մատենագրության, աստվածաբանության առարկաները, որոնք հիմնաքարն են հայրենասիրության և եկեղեցասիրության: Այսօր, լսելով ձեր քննությունները, մխիթարված եմ և պատվիրում եմ, որ ավելի խորացնեք ձեր գիտելիքները: Ես այսօր ևեթ պիտի տեղյակ պահեմ մեր բարերարներին, որ իրենց տրամադրած միջոցները ծախսվել են ճիշտ»:

Վեհափառն իր խոսքն ավարտեց հուզված՝ օրհնելով մեզ բոլորիս: Վեհափառական խոսքը բոլորիս համար ոգևորող և պարտավորեցնող էր, մանավանդ մեզ համար, որ արդեն դարձել էինք լսարանցիներ:

1948-1949 ուս. տարեշրջանը նշանավոր էր նաև նրանով, որ Հոգևոր Ճեմարանը տվեց իր առաջին հունձքը՝ 5 ուսանողներ, իսկ 1951 թվականին նույն այդ լսարանից 3 սաներ միացան 5-ին, որոնք ծունկի իջան Իջման Սուրբ Սեղանի առջև, ուխտեցին ծառայել մեր Սուրբ Եկեղեցուն և հայ հավատացյալ ժողովրդին: Մայր Աթոռում և Հոգևոր Ճեմարանում 1917 թվականից հետո հոգևոր ուրախության առաջին առիթն էր: Պատկերացնո՞ւմ եք, նորաբաց Հոգևոր Ճեմարանը տալիս էր իր առաջին հունձքը: Սա այն դեպքում, երբ նախկին Գևորգյան Ճեմարանը, որ բացվել էր 1874 թվականին, 15 տարի անց միայն տվեց իր առաջին հոգևոր հունձքը: Ընթերցողը

[24] Տե՛ս Հոգևոր Ճեմարանի ավարտականների միջուկը (առարկաների ցանկը):

թող սխալ չհասկանա, թե նախկին Գևորգյան Հոգևոր Ճեմարանը «սխալ» հիմքերի վրա էր դրված, որի արդյունքում հնարավոր եղավ միայն 15 տարի հետո ունենալ առաջին հոգևոր հունձքը: Բոլորովին ո՛չ. Երջանկահիշատակ Գևորգ Դ Հայրապետի մտահոգությունն այն ժամանակ մեծապես նաև հայ դպրոցի և հայ մշակույթի հետ առնչվող խնդիրներ էին, որ Հոգևոր Ճեմարանը դառնար հայ դպրոցին մասնագետ ուսուցիչներ մատակարարող մի հաստատություն: Այդ օրերին, հոգևորականներ պատրաստելուց առաջ, ճեմարանին առաջադրվել էր ռուսացման ճանապարհի վրա դրված 600 հայկական դպրոցների համար շուտափույթ հասցնել հայոց լեզվի, հայոց պատմության ուսուցիչներ, իսկ հայագիտությանը զարկ տալու համար՝ ապագա հայագետներ:

Պետք է արձանագրել, որ շրջանավարտ ճեմարանցիները, հակառակ ցարական չինովնիկների արգելքների առաջին 15 տարիներին, որի մասին խոսեցինք վերևում, մեծ պատասխանատվությամբ գնացին հայոց դպրոցներ՝ տանելով իրենց հետ ճեմարանում ստացած ազգային-եկեղեցական ոգով այն կրթությունն ու դաստիարակությունը, որն օգնեց բարձրացնել հայ դպրոցն ազգային-եկեղեցական ոգու բարձրացման տեսանկյունից:

1945 թվականին վերաբացված Հոգևոր Ճեմարանը մտահոգություն ուներ պատրաստել բացառապես Հայ Եկեղեցու սպասավորներ, որոնց կարիքը հսկայական էր: Ի պատիվ վերաբացված Հոգևոր Ճեմարանի, հակառակ բոլոր արտաքին համայնավարական ճնշումների, այնուամենայնիվ, առաջին սերնդի 9 շրջանավարտներից 8-ը մտան հոգևոր ասպարեզ՝ անսահման ուրախություն պատճառելով ծերունազարդ Հայրապետին և հավատացյալներին: Սարկավագ ձեռնադրվելով՝ մենք հնարավորություն ունեցանք ավելի հաճախ լինելու Վեհափառ Հայրապետի մոտ: Հանդիպումների ժամանակ ծերունազարդ Գևորգ Զ Հայրապետը մեզ հետ խոսում էր Մայր Աթոռի ավանդույթների, հայ և համաշխարհային երաժշտության, փիլիսոփայության, հոգեբանության և հայ մատենագրության մասին:

Առաջին շրջանավարտների սարկավագական ձեռնադրությունից շատ կարճ ժամանակ հետո, առանց չափազանցության, կարող եմ հաստատել, որ Մայր Տաճար եկողների թիվը բավականին մեծացավ: Անշուշտ, միամտություն կլիներ կարծել, թե բոլորն ուրախ էին, որ երեք տասնամյակ Հայ Եկեղեցու անասելի դժվարություններից հետո Սուրբ Էջմիածինն ուներ իր առաջին 8 սարկավագները, որոնք պիտի պատրաստվեին ավելի պատասխանատու առաքելության: Սխալված չեմ լինի ասել, որ եկողների մի մասի համար երիտասարդ եկեղեցականներս ժամանակավրեպ էինք և մի քիչ անհասկանալի: Շատերի համար երիտասարդ հայ եկեղեցականների միջոցով երևում էր մեր Եկեղեցու վերազարթոնքի մի փոքրիկ նշան, իսկ ոմանց համար էլ՝ անընմբռնելի ոչ ճիշտ մի գործողություն, որ թույլ էր տրվում կոմունիստական դարաշրջանում ապրող, նոր հասարակարգ կառուցող երիտասարդներին դառնալու «մերժելի», «հետամնաց» և կոմունիզմ կառուցող սերնդի համար անհարիր գաղափարախոսության հետևորդներ:

Հոգևոր Ճեմարանը դժվարությամբ, բայց հաստատուն քայլերով ինքնաճանաչման էր գնում: 1949-1950 ուս. տարեշրջանում Հոգևոր Ճեմարանում կար մեկ առա-

ջին դասարան և մեկական առաջին և երկրորդ լսարաններ: Ինչպես նկատեցիք, նախորդ մեկ-երկու տարիներին ուսանողների ընդունելություն չէր եղել:

Երկրորդ աշխարհամարտից մեկ կամ երկու տարիներ հետո, 1947 թվականից, ռազմական տեսակետից գերհզոր երկու տերությունների՝ Խորհրդային Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև սկսվել էր նախադեպը չունեցող սառը պատերազմական վիճակը: Աշխարհը կանգնած էր ատոմային սարսափելի պատերազմի առջև: Դժբախտաբար, սառը պատերազմի վնասները մեծապես զգալի էին նաև Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի համար: Մայր Աթոռը, բնականաբար, նման պայմաններում տնտեսական ապահովության մասին չէր կարող մտածել առանց արտասահմանյան բարերարների նյութական օգնության:

Քաղաքական գերլարված վիճակը մեծապես վախեցրել էր Մայր Աթոռի բարերարներին, որոնք ավելի զգուշավոր էին դարձել, քանզի նրանց շատ հաճախ, մեղմ ասած, մեղադրում էին իրենց երկրներում, որպես Խորհրդային Միության համակիրներ: Քաղաքական այդ ճգնաժամային պայմաններում լինում էին զորահավաքներ, իսկ թերթերի և ձայնասփյուռի միջոցով մշտապես երկու գեր ատոմային զինանոց ունեցող պետությունները մեղադրում էին միմյանց: Պատերազմ չկար, բայց ապրում էինք պատերազմ սկսվելու վախով:

Այսօր կամ վաղը կարծեք թե անխուսափելի էր երրորդ համաշխարհային պատերազմը: Դժվարին քաղաքական այդ պայմանները ճեմարանցիներիս համար ևս զգալի էին, որն էլ, բնականաբար, անուղղակի անդրադառնում էր մեր հոգեբանության, ուսման որակի և նույնիսկ ապրելակերպի վրա:

1949-50 ուստարում զինվորական կոմիսարիատներն աշխատում էին գերծանրաբեռնված ռեժիմով: Բնականաբար, տարիքային իմաստով ճեմարանցիներս նույնպես համարվում էինք զինապարտ և հաճախ կանչվում էինք հաշվառման: Ճեմարանում հաճախ խոսվում էր, թե վաղը կամ մյուս օրը ճեմարանի սաները նույնպես կզորակոչվեն Խորհրդային բանակ: Մտահոգված ճեմարանի փակման ճակատագրով՝ երջանկահիշատակ լուսահոգի Գևորգ Զ Կաթողիկոսին հաջողվեց երկար և համառ բանակցությունների արդյունքում համոզել խորհրդային քաղաքական իշխանավորներին՝ ճեմարանի սաներին վերջնականապես ազատել զորահավաքից: Անհավատալի այս քայլով կաթողիկոսը կարողացավ Հոգևոր Ճեմարանի կայացման գործընթացը վերջնականապես ապահովել:

Քաղաքական այդ անկայուն վիճակը ավելի էր դժվարացնում Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի տնտեսական՝ առանց այն էլ ոչ նախանձելի վիճակը: Վեհափառ Հայրապետի թափած ջանքերը շատ քիչ արդյունք էր տալիս ճեմարանի կարիքները լիարժեք բավարարելու: Այդ տարիներին մենք, որպես ավագ լսարանի սաներ, տեսնում էինք այդ ամենը. գիտեինք նաև, որ Վեհափառն իրեն հատուկ համառությամբ և հետևողականությամբ փորձում էր ստեղծել մնայուն հիմնադրամ, որի տոկոսներով հնարավոր կլիներ ապահովել Հոգևոր Ճեմարանի գործունեությունը, առաջադիմությունը և բարգավաճումը:

Հոգևոր Ճեմարանի աշխատանքներին շատ հաճախ խանգարում էին նաև իշխանություններն իրենց կուսակցական չինովնիկների անհարկի միջամտություններով, որոնք իրենց իրավունք էին վերապահում անգամ խանգարելու Հոգևոր Ճեմարանի

ընդունելության հերթական հայտարարությունը «Էջմիածին» ամսագրում տպագրելը: Ահա մի քանի տող այն նամակից, որ 1952 թ. օգոստոսի 31-ին ճեմարանի տեսուչ Մինաս Մինասյանը գրել է Գևորգ Զ Կաթողիկոսին. «Թույլ տվեք, Ձերդ Սրբության ուշադրությանը հանձնել հետևյալ հանգամանքները: Ձերդ Վեհափառության մեկնելուց հետո Հոգևոր Ճեմարանի նոր ուստարվա ընդունելության մասին հայտարարություն գրելով, մի օրինակ ներկայացրի Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Հրաչյա Գրիգորյանին: Համաձայն պր. Գրիգորյանի ցուցմունքի՝ երկու ուղղում կամ հավելում կատարելով, որից մեկը՝ «18 տարին լրացած» տղաների մասին էր, և հանձնեցի պրոֆ. Աբրահամյանին՝ խնդրելով, որ դարձյալ ներկայացնի պր. Գրիգորյանին և այլ պատկանյալ մարմիններին՝ «Էջմիածին» ամսագրի մայիս ամսի համարում հրատարակելու նպատակով:

Հետագայում ես ինքս խնդրեցի պր. Գրիգորյանին, հնարավորություն տալու հայտարարությունը հրատարակելու, սակայն պր. Գրիգորյանը հայտարարեց, թե սկզբունքային համաձայնություն չի կայացած: Հետևաբար հնարավոր չէ այդ համարում տպագրել տալ: Ահա այս պատճառով ճեմարանի հայտարարությունը չտպագրվեց»[25]:

Այս բոլոր դժվարություններով հանդերձ՝ 1949-50 ուս. տարեշրջանը Հոգևոր Ճեմարանը փակեց բարձր առաջադիմությամբ: Հինգերորդ ուսումնական տարեշրջանի ամավերջի քննություններից հետո, որին մասնակցում էր Գևորգ Զ Կաթողիկոսը՝ ընկերակցությամբ Ավետիք Իսահակյանի, Երվանդ Շահազիզի, Ստեփան Կամսարականի և այլոց, անցավ մեծ հաջողությամբ: Վեհափառի ոգևորությունն այնքան բարձր էր, որ քննություններից հետո Հոգևոր Ճեմարանի դահլիճում հանդիպեց ուսանողությանը՝ հայրապետական տպավորություններն ու հորդորները և քննությունների արդյունքները մեզ փոխանցելու համար: Հիշարժան պատմական այդ պահերը ոգևորության աղբյուր էին բոլորիս համար: Իմաստուն և սիրելի Հայրապետը, մեծ հոգեբանի օրինակով մեզ բոլորիս խորաթափանց և խելացի հայացքով զննելուց հետո՝ խոսեց Գևորգ Դ Մեծագործ Կաթողիկոսի հիմնած Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, նրա հետապնդած կրթական-կազմակերպչական նպատակների և որպես Հայաստանի միակ կարևոր բարձրագույն կրթօջախի և նրա կրթական երեք ուղղությունների՝ հայագիտական, մանկավարժական և աստվածաբանական ճյուղերի մասին՝ շեշտելով, որ ճեմարանի նպատակն է պատրաստել բարձր կրթություն ստացող հոգևորականներ: Վեհափառը խոսելով մեզ ավանդվելիք առարկաների մասին՝ հատուկ ջերմությամբ շեշտադրում էր հայագիտական առարկաների կարևորությունը: «…Մեր եկեղեցականները ոչ միայն պիտի լավ գիտենան աստվածաբանական առարկաներ, այլև հայոց պատմությունը, հայ մատենագրությունը… Այսօր առաջին հերթին լսելով հայ մատենագրության քննությունը, ես հոգով մխիթարված եմ: Պատմագրությունը հայագիտության հիմքն է: … Ազգը չի կարելի սիրել առանց նրա անցյալն ու ներկան լավ իմանալու: Հայ հոգևորականների

[25] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Զ, Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, Երևան, 1999, էջ 725:

դարավոր ավանդներն են եղել՝ ծառայել Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին և հայրենի պետությանը»[26]:

Այս գաղափարների ազդեցությամբ էինք կրթվում և դաստիարակվում Ս. Էջմիածնի հովանու ներքո, 20-րդ դարի 50-ական թվականներին, երբ Լուսավորչի գահի գահակալն էր Հայաստանյայց Եկեղեցու անցյալ դարի առաջին մեծություններից՝ Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառը, հակառակ իր բազմազբաղվածությանը, անակնկալ երբեմն գալիս էր ճեմարան՝ դասալսումների, որից հետո շատ օգտակար զրույցներ էր ունենում մանկավարժների հետ: Նա խոսում էր փիլիսոփայության, աստվածաբանության, հոգեբանության, բայց մանավանդ մանկավարժության մասին, տալիս էր ավանդվող առարկաների մասին կարևոր խորհուրդներ և ցուցումներ: Նա մանկավարժ էր բառի ողջ տարողությամբ, 27 տարի անընդմեջ եղել էր մանկավարժ Նոր Նախիջևանում:

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը 1950 թ. «Էջմիածին» ամսագրի մայիս-հունիս համարներում, «Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանի նվաճումները» վերնագրված հոդվածում, շատ ճիշտ է բնորոշում Հոգևոր ճեմարանի անցած 5 տարիները և նվաճումները՝ դրա հետ մեկտեղելով թերությունները, որոնք շատ հաճախ դանդաղեցնում էին Հոգևոր ճեմարանի առաջընթացը: Ճիշտ է, դժվար այդ տարիներին Մայր Աթոռը հնարավոր բոլոր միջոցներն օգտագործելով ապահովում էր ճեմարանի կայացումը՝ միշտ շեշտը դնելով ուսման բարձր որակի ապահովմանը: Մենք՝ վերջին լսարանի ուսանողներս, մշտապես տեսնում և զգում էինք, որ տեսչությունն ամեն տարի նոր առարկաների ավելացման հետ Երևանի ԲՈՒՀ-երից և գիտական հաստատություններից հրավիրում էր վաստակաշատ դասախոսներ: Եկեղեցական մի շարք դասախոսների կողքին մենք տեսնում էինք այդ ժամանակվա նշանավոր դասախոսներից պրոֆեսոր Առաքել Առաքելյանին, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանին, աստղագետ-տոմարագետ Լևոն Սեմյոնովին, պատմական գիտությունների թեկնածու Ասլան Շահնազարյանին, ճանաչված կոմպոզիտոր Դանիել Ղազարյանին և մի շարք ուրիշ դասախոսների:

Հենց այս նշանավոր և ճանաչված դասախոսների ձեռքի տակ ուսման հինգերորդ տարում մեր սաներից շատերն ունեին կրթական այնքան պատրաստվածություն, որ ազատ աշխատակցում էին «Էջմիածին» ամսագրին: Լինելով վերջին լսարանի սաներ, պրոֆեսոր-ձեռագրագետ Աշոտ Աբրահամյանի ղեկավարությամբ մենք կազմեցինք Մայր Աթոռում պահվող ձեռագրերի, որոնց թիվը այդ ժամանակ արդեն մի քանի հարյուր էր, գիտական ձեռագրացուցակը, որը կարճ ժամանակ անց պրֆ. Աշոտ Աբրահամյանի ստորագրությամբ լույս տեսավ «Էջմիածին» ամսագրի համարներում, որպես Սուրբ Էջմիածնում ձեռագրերի գիտական ցուցակ:

Ճեմարանի վերատեսուչը իր տարեկան հաշվետվության մեջ գրում էր. «Շնորհիվ Վեհափառ Հայրապետի անմիջական օժանդակության, ինչպես նաև դասախոսական կազմի անխոնջ ջանքերի, Հոգևոր ճեմարանը բարեհաջող բոլորեց իր ուսումնական հինգ տարիները:

[26] «Էջմիածին» ամսագիր, 1950, մայիս-հունիս, էջ 52:

Ճիշտ է, տնտեսական որոշ պատճառներով վերջին երկու ուսումնական տարիներում (խոսքը 1948-1949 և 1949-1950 ուս. տարիների մասին է) Հոգևոր Ճեմարանը նոր ընդունելություն չհայտարարեց: Նախորդ տարիներում ընդունված ուսանողներն արդեն փոխադրվել էին լսարանական բաժին: 1949-1950 ուստարում մենք ունեցանք Ա և Բ լսարաններ, իսկ հաջորդ՝ 1950-1951 ուս. տարվանից ունենալու ենք նաև Գ լսարան»[27]:

1949-1950 ուստարվա ավարտին ամավերջի փակման հանդեսը տեղի ունեցավ Օշականում: Կարծեք թե նախախնամական էր մեզ համար ուսումնական վճռական վերջին ավարտական տարվա շեմին ծնկի գալ Սուրբ Մեսրոպի սրբազան շիրիմի առաջ, երդվել, որ գալիք՝ վեցերորդ լսարանում ավելի լավ պետք է սովորենք, որը պետք է օգներ մեզ լինել է՛լ ավելի եկեղեցասեր՝ օրինակ դառնալու մեզանից հետո եկող ուսանողներին:

Վեհափառ Հայրապետը, ներկայացնելով մեզ Օշականում ամփոփված Ս. Մեսրոպի խորհուրդը, պատգամեց՝ ասելով. «Թող Ս. Մեսրոպն օգնի ձեզ բոլորիդ: Հեռու ձեզանից ծուլությունն ու անհամեստությունը, անհոգությունն ու մեծամտությունը: Եղեք ավելի պատրաստված՝ հոգևոր եզակի այս ասպարեզը մտնելու համար»: Մենք գիտակցում էինք, որ Հոգևոր Ճեմարանն իրապես միակ ուսումնական այն հաստատությունն էր, որը պիտի դառնար Հայաստանյայց Եկեղեցու կրթական հիմնական դարբնոցը: Մենք հասկացանք, որ հոգևոր ասպարեզում ապագա ունենալու համար, իրոք, պիտի մեր վարքով ու բարքով, պատրաստվածությամբ կոփվենք՝ ծառայելու Մայր Աթոռին ու մեր բազմադարյան Եկեղեցուն: Մեզ այնպես էր թվում, թե գոհունակության զգացումով էինք լցված դեպի Հայրապետն ու տեսուչն այն պարզ պատճառով, որ մենք արդեն, կարծեք, հասկանում էինք ժամանակների հասցրած դաժան ու քանդիչ հարվածը մեր Եկեղեցուն, որն էլ, բնականաբար, կարծեք օգնում էր մեզ ժամանակից մի քիչ շուտ հասունանալ:

1950 թվականի հունիսին, բավականին լարված քննական շրջանից հետո, իրավունք նվաճեցինք մի քիչ հանգստանալ ամառային արձակուրդներին և նախապատրաստվել 1950-51 թթ. ավարտական վերջին տարվա ուսումնական տարեշրջանին;

1951 թվականը մեր հայրենիքի, ժողովրդի և մեր Ս. Եկեղեցու համար հիշատակելի թվական էր բոլոր առումներով: Սառը պատերազմը երկու գերհզոր տերությունների միջև շարունակվում էր: Երկրի տնտեսական վիճակը ծանր էր, որովհետև միջոցները ծախսվում էին նոր պատերազմին պատրաստվելու համար: Գերհզոր տերությունները տնտեսական ամբողջ հզորությունը ծախսում էին ատոմային, ջրածնային և ժամանակակից այլ զենքեր ստեղծելու վրա: Պատերազմի հավանական վտանգը այնքան մեծ էր, որ հաճախ կարծիքներ էին լսվում, թե հեռու չէ քաղաքակրթության վերացումն ընդհանրապես:

1951 թվականը նշանակալի էր նաև մեր Եկեղեցու և Մայր Աթոռի համար: Հռոմեադավան Կաթոլիկ Եկեղեցին Գրիգոր Աղաջանյան կարդինալի միջոցով վերսկսել էր մարդորսական քարոզչությունը հայկական համայնքներում և ողջ արտասահմանի տարածքում: Վատիկանը հայ կաթոլիկ միաբանների միջոցով, գլուխ ու-

[27] «Էջմիածին», 1950 թ. մայիս-հունիս, էջ 48:

նենալով կարդինալ Աղաջանյանին, շնչահեղձ փորձեր էր անում կաթոլիկ ավազանում մկրտել նույնիսկ Ս. Գրիգոր Լուսավորչին, Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին և նույնիսկ մեր կաթողիկոսներից մի քանիսին:

Ժամանակի մամուլն արժանի հարված ու գնահատական է տվել այդ հավակնոտ և պատմական փաստերը կեղծողներին: 1951 թվականի ընթացքում մեր Եկեղեցու բարձրաստիճան եկեղեցականներ՝ Գարեգին արքեպիսկոպոս (Տրապիզոնի) Խաչատրյանը, Ս. Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանը, Տ. Դերենիկ եպս. Փոլատյանը և դեռ ուրիշներ, ոչ միայն իրենց ուսումնասիրություններով մերկացրին նման պրոպագանդի սնանկությունը, այլև մեկ անգամ ևս բարձրացրին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

1951 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Մայր Տաճարում տեղի ունեցավ սարկավագական երկրորդ ձեռնադրությունը: Երեք շրջանավարտներ համալրեցին սարկավագության շարքերը:

1951 թվականին լրացավ նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի՝ Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակը: Գևորգ Զ Վեհափառը Սրբատառ հրաշալի մի Կոնդակով ողջ 1951 թվականը հռչակեց հոբելյանական տարի: Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ Վարդանանց հերոսամարտը եղել ու մնում է որպես մեր ժողովրդի հավաքական հերոսություն, բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության և եկեղեցական ուխտապահության պատմական անկրկնելի մի դրվագ, որ առ այսօր ոգևորել է բոլոր հայ սերունդներին: Մեզ՝ ճեմարանցիներիս համար զարմանալի էր, որ Ավարայրի հերոսամարտի 1500-ամյակի տոնակատարության կազմակերպման, անցկացման ողջ պատասխանատվությունը Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի հրամանով դրվեց ճեմարանի սաների վրա: Վեհափառ Հայրապետն ինքն առաջարկեց մեզ 8 կամ 9 թեմաներ տոնակատարության հանդիսությանը զեկուցելու համար: Տեսնել էր պետք այդ մեծ անհատականության՝ Գևարդ Զ Կաթողիկոսի անթաքույց ուրախությունը մեր կարդացած զեկուցումների առթիվ:

Նույն թվականի հունիսին Գևորգ Զ Հայրապետը կատարեց իր երկրորդ և վերջին եպիսկոպոսական ձեռնադրությունը: Ձեռնադրվողներն էին Ս. Երուսաղեմի այդ օրերի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե վրդ. Տերտերյանը՝ նույն միաբանության երկու վարդապետների հետ: Ձեռնադրվողներից էր նաև Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն ծ. վրդ. Պալճյանը (հետագայում Կաթողիկոս Վազգեն Ա (կթղ. 1955-1994 թթ.), Մայր Տաճարի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Սահակ ծ. վրդ. Տեր-Հովհաննիսյանը:

1951 թվականը նշանավոր էր նաև Հոգևոր Ճեմարանի համար: Զ լսարանի 9 սաներ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը: Նրանց ընդդիմախոսներն էին նորընծա եպիսկոպոսները: Պաշտպանությունն անցավ շատ բարձր մակարդակով: Ընդդիմախոս Սրբազանների կողմից շատ ջերմ ու դրական խոսքեր ասվեցին ավարտաճառերի բարձր որակի մասին: Ահա այդ կարծիքներից մեկը, որ ներկայացվեց պաշտպանության հանձնաժողովին, որի նախագահը Վեհափառ Հայրապետն էր. «Հոգևոր Ճեմարանի ծրագիրը,- ասում էր Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե եպս. Տերտերյանը,- մեր կրոնական բարձրագոյն ընծայարաններու

ծրագիրն է, որ տարիներէ ի վեր առաջ կը տարուի վերին աստիճանի պատրաստուած, ձեռնահաս դասախօսներու անձնակազմի մը կողմէ: Ես Էջմիածին հասա, երբ արդեն աւարտուած էին ճեմարանի տարեվերջի քննութիւնները... Ինծի ընծայուեցաւ քաղցրագոյն առիթը աչքի անցնելու ընծայացուներու աւարտական թեզերը, և այդ թեզերէն երկուքին՝ Նարեկացիի և Սայաթ-Նովայի մասին ուսումնասիրութիւնների քննարկումը ես կատարեցի: Իմ տպաւորութիւնն այդ թեզերու հեղինակներուն ուսումնական մակարդակին և հասկացողության մասին աւելի քան դրական է»[28]:

Յոթ (1945-1951 թթ.) լարված և անակնկալներով լեցուն տարիներից հետո, Հոգևոր Ճեմարանը տվեց իր առաջին շրջանավարտ 9 սաները, որոնք հիմնականում ավարտեցին լավ և գերազանց գնահատականներով: Առաջին շրջանավարտներից 8 սաներ մտան հոգևոր ասպարեզ: Գևորգ Զ Հայրապետը, հակառակ Մայր Աթոռի միաբանության շարքերի նոսրությանը, չէր շտապում նորավարտ սարկավագներին հոգևոր աստիճանի արժանացնել: Հակառակ այդ ամենի, երջանկահիշատակ Հայրապետը 1951 թվականի աշնանը իր սիրած 8 միաբան սարկավագներին ուղարկեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր կենտրոնը հանդիսացող Զագորսկի հոգևոր ճեմարանում լեզու և աստվածաբանություն ուսանելու:

Վեհափառը հոգևոր ասպարեզ մտած առաջին և հետագա շրջանավարտների համար ուներ ուսումնական մեծ ծրագրեր: Երբեմն իրեն հարցնում էին. «Վեհափա՛ռ, ինչո՞ւ վեղար չեք տալիս սրանց»: Լուսահոգի Վեհափառի պատասխանը միանշանակ էր. «Սոցա վեղարի արժանացնելու համար մայրենիից (նկատի ուներ նաև գրաբարը) և ռուսերենից զատ պիտի գիտենան մեկ օտար լեզու, մասնագիտական, աստվածաբանական և բանասիրական կարողություններ, որից հետո կարժանացնեմ սոցա վեղարին»: Այս էր համոզումը Վեհափառի:

Հայոց Հայրապետը, չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, իր անսահման լավատեսությամբ և համոզելու հազվագյուտ կարողություններն ի գործ դնելով՝ համառորեն փորձում էր Խորհրդային Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը և արտասահմանի ազգային բարերարներին համոզել, թե ինչպիսի միաբանություն է ուզում ունենալ Մայր Աթոռում. «Մեր նպատակն է պատրաստել այնպիսի հոգևորականություն, որպիսին պատրաստեցին Հայ Եկեղեցու խոշորագույն և հավետ անմոռանալի Հայրապետները՝ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ՝ գիտությամբ զինված ճշմարիտ կրոնական և ժողովրդասիրական ու հայրենասիրական ոգով ներշնչված ու գաղափարին նվիրված հոգևորականություն, որ հայ գրականություն ստեղծեց, ազգային ինքնագիտակցության և հայրենասիրության ոգի ներշնչեց, որի շնորհիվ հայ ժողովուրդը իր երկար, տառապալից պատմության ընթացքում, տոկալով ամեն նեղությանց, պայքարեց ու մարտիրոսացավ իր անկախության և ազատության համար, բայց դիմազուրկ չեղավ և ապրեց մինչև այսօր»: Այս նույն նամակի սկզբում, որը հասցեագրված է «Ս. Էջմիածնի հիմնադրամի կենտրոնական հանձնաժողովի պատվարժան անդամներին», լուսահոգի մեծագործ Հայրապետը նորից բնորոշում է, թե ինչպիսին պետք է լինի Մայր Աթոռի միաբանը: Ահա այդ բնութագիրը. «Այս տարի,- գրում է Վեհափառը,- Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը ավարտեցին ինը ուսանող, որոնցից ութը սարկավագներ են ձեռնադրվել:

[28] «Էջմիածին», 1951 թ., սեպտեմբեր- հոկտեմբեր, էջ 5:

Մեր նպատակն է Ս. Էջմիածնում մի նոր միաբանություն ստեղծել, որ տիրապետե գրաբարին, ռուսերենին և մի եվրոպական լեզվի, միաբանություն, որ կատարելապես տիրապետե աստվածաբանական գիտության, ուսանի փիլիսոփայական և պատմական գիտությանց հիմնական առարկաները և ձեռք բերե փիլիսոփայական և պատմական լայն աշխարհայացք, որպեսզի ընդունակ լինի հայագիտական և աստվածաբանական ուսումնասիրություններ կատարելու, պերճախոս քարոզիչներ դառնալու, եկեղեցական-վարչական բարձր պաշտոններ վարելու և Ս. Էջմիածնի բարձրագույն Հոգևոր Ճեմարանի հեղինակավոր դասախոսներ լինելու: Ստեղծելու մի միաբանություն, որ ներկա պայմանների ու պահանջի համեմատ, իրապես, ծառայե ազգին, Եկեղեցուն և հայրենիքին»[29] :

Հակառակ իր անսահման լավատեսության, Վեհափառը փորձում էր համոզել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին՝ ասելով. «Այս տարի գոնե մի քանիսին թույլ տվեք արտասահման ուղարկել»: Այդպես էլ չկատարվեց Հայ Եկեղեցու այդ մեծագույն Հայրապետի իղձը: Ինչպես արդեն մի քանի անգամ ասել եմ, երանաշնորհ Հայրապետը երբ համոզվեց, որ պայմանները նպաստավոր չեն Մայր Աթոռի համար, առանց վարանելու, ժամանակ չկորցնելու համար, ութ միաբան սարկավագներիս ուղարկեց Զագորսկ՝ Ռուս Ուղղ ափառ Եկեղեցու հոգևոր ճեմարան, ուր այդ ժամանակ սովորում էին Ուղղափառ Եկեղեցու շուրջ 600 ապագա հոգևորականներ:

1945 թվականին վերաբացված Հոգևոր Ճեմարանի յոթնամյա պատմության այդ էջը փակելուց առաջ ասեմ. ավարտելով Հոգևոր Ճեմարանը, որպես առաջին սերունդ, ուսանողական համազգեստը փոխարինեցինք եկեղեցական հանդերձով՝ մնալով մշտապես մեր պաշտելի հոգևոր հոր՝ Գևորգ Զ Վեհափառի ուշադրության կենտրոնում: Շաբաթը մի քանի անգամ լինում էինք Վեհարանում: Հայրապետը մեզ լսում էր համբերությամբ, մեր գանգատները դժվար կյանքի, ընտրած հոգևոր ասպարեզի դժվարությունների, մեր նկատմամբ իշխանությունների արհամարհական վերաբերմունքի, որ զգում էինք յուրաքանչյուր քայլափոխին: Իմաստուն այդ մեծ անհատականությունն իր զրույցներով մեզ տանում էր հայ ժողովրդի մշակույթի և մեր Ս. Եկեղեցու պատմության խորքերը և բացատրում, որ հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ վճռական ու պատվավոր է եղել Հոգևոր Ճեմարանի, վանքերի և առհասարակ հայ դպրոցի դերը կրոնական դաստիարակության, ազգային ինքնագիտակցության, մեր հրաշալի մշակույթի ստեղծման ու պահպանման գործում: Զրույցներով ոգևորում էր մեզ և Ավետարանից օրինակներ բերելով՝ ասում. «Ապրեցե՛ք հպարտ և անտարբեր վերաբերմունք ունեցեք ձեզ չհավատացողների հանդեպ: Մեր Փրկիչն ու Նրա Աշակերտները նույնպես նման առիթներով հալածվում և արհամարհվում էին, բայց նրանք իրենց հավատքով և համոզումով կարողացան աշխարհին լույս և անհատին մարդ դառնալու ճանապարհը ցույց տալ»:

Հաճախ էր մեզ նմանեցնում Առաքյալներին, փորձում էր իր ազնվական հոգուց և մարդասեր սրտից մի քիչ փոխանցել մեզ: Հպարտորեն պիտի ասեմ, որ նրան հաջողվեց ինչ-որ չափով իր հոգով ու գաղափարականով «վարակել» և դաստիարակել մեզ: Անսահման կապված էր ճեմարանին և ճեմարանականներին: Նույնիսկ հի-

[29] ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 823, ց. 1, գործ 70:

վանդության մահճին գամված, մահից մեկ օր առաջ, երբ իր մոտ էինք, զգում էինք, որ մտքով ու հոգով ճեմարանցիների հետ էր. «Ճեմարանը մեծ պարտականություն ունի, պետք է ավելացնել ուսանողության թիվը»:

Այժմ, երբ պատմություն դարձած այդ դեպքերից անցել են հինգ տասնյակ տարիներ, դժվարանում եմ բացատրել իմաստը Հայրապետի մահվան վերջին ժամերին արտասանած հետևյալ խոսքերի, որ մեզ համար մնաց որպես կտակ:

Վեհափառի ցանկությամբ մենք շարվեցինք իր մահճակալի դիմաց: Մեղմ, հազիվ լսելի ձայնով հաշվեց մեզ (ութ սարկավագներիս), մի պահ հանգստացավ և շատ պարզ ու հստակ արտասանեց. «Երեքն էլ Մոսկվայում են, բոլորը միասին 11 սարկավագ: Ի՞նչ լավ է, որ տասներկուերորդը չկա»: Դժվարությամբ այս ամենն ասելուց հետո, երբ նկատեց մեր հուզումն ու արտասուքը, բառացի, դժվարությամբ, կերկերալով արտասանեց. «Էջմիածինը տառապալից ու փշոտ ճանապարհ է անցել, բայց կենդանի է մնացել ու կմնա… Սիրեցեք Էջմիածինը, մեղք է Էջմիածինը»: Այս վերջինն այն բառերն էին, որ լսեցինք մեր պաշտելի, իմաստուն Հայրապետից:

Լույսերի մեջ բնակվող սիրելի Վեհափառ, հոգուս պարտքն ունեմ ասելու, որ Ձեր կողմից վերաբացված Հոգևոր Ճեմարանը այսօր արդեն թևակոխել է իր գոյության վեցերորդ տասնամյակը՝ ճյուղավորվելով նաև Վազգենյան և Գյումրիի Հոգևոր Ճեմարանների, և դարձել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորներ պատրաստող բարձրագույն աստվածաբանական համալսարան, որի շրջանավարտները, ինչպես Դուք էիք երազում, այսօր ծառայում են ոչ միայն Հայրենիքի քաղաքներում, գյուղերում և ավաններում եղած եկեղեցիներում, այլև Սփյուռքում:

Հիշատակդ օրհնյա՛լ, ճեմարանը վերաբացող պաշտելի՛ Վեհափառ, որ հավիտենապես 1954 թ. մայիսի 9-ից ննջում ես Ներսես Ե Աշտարակեցի և Հայոց Հայրիկ Հայրապետների շարքում: Խունկ և աղոթք գերեզմանիդ: